

մարդոս յատկէ է - : Այժմ առանց տժգու-
հութեան կրնանք հաւատել որ սխալիլը
միայն մարդուս մենաշնորհ է. կենդանիք
ալ սխալական են :

Հ. Ն. Մ.

Հ. ՄԱՐԻԱՆՈՅ ԱՐՄԵՎԻՆԻ

Ուրբանեան Համալսարանի Գրիտոնէա-
կան Հնութեան մեծահամար ուսուցչա-
պետը շարադրած էր հետևեալ աղօթքը,
զոր ամէն օր ջերմեւամդուկեամբ կ'ուղչէր
առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս :

ԱԶՆՈՒԱՆԱՆ ՏՈՂՄԷ

ՄԱՐԻԱՆՈՅ ՌԱՄԲՕԼԼԱ

ՏԷԼ ԳԻՆՏԱՐՈՅ

Միրանաւորը, որ շատ տարիներ Լեոն
ԺԳ քահանայապետին պետական քարտու-
ղարն էր՝ (ծնել. 1843. † 1913 դեկտ. 16)
հետևեալ աղօթքը շարադրած ըլլալով, ա-
մէն օր, պատարագէ վերջը, ջերմագին առ
Ս. Կոյսն կը մատուցանէր :

Ա Ղ Օ Թ Բ

ԱՐ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՍ

Ո՛վ օրնեալ կոյս, Մայր Աստուծոյ, ազէ դար-
ձուր բարեգութ նայուածքը կրկնէրէն՝ ուր բազ-
մած ես իբր թագուհի՝ քու այս թշուառ ու
մեղաւոր ծառայիս վրայ : Ան՝ թէ է կը ճաննայ
իր անարժանութիւնը, ի նստուցում այն բոլոր
անաբանաց՝ որ կ'ընեն քեզի ամբարիտ է կայ-
ելոյի լիզուները, իր օրովն խորեն կ'օրնէ ու կը
փառաւորէ քեզի՝ իբր ամենամաքուրը, ամենա-
զեղեցիկը ու ամենասուրբը բոլոր ստեղծուածոց
մէջ, կ'օրնէ քու սուրբ Անուք, կ'օրնէ քու այն
բոլոր գերազանց պարզեղանք ու շնորհներդ՝ զոր
ուելիս իբր ճշմարիտ Մայր Աստուծոյ, միշտ կոյս,
ամբիծ է անբարտ յղացեալ, է մասնակից փճը-
կործործիման մարդկային ազգին : Կ'օրնէ Յա-
կոնիսկան Նայրը՝ որ ստանձին կերպով ընտրեց
քեզի իրեն Դուստր. կ'օրնէ մարմնացեալ Բա-
նը՝ որ մարդկային բնութիւնն ընդունելով քու
ամենամաքուր ծոցիդ մէջ՝ քեզի իրեն Մայր
ըրաւ. կ'օրնէ Աստուծային Սուրբ Նոյնին՝ որ
անցաւ քեզի իրեն Հարս ընել, կ'օրնէ, շնոր-
հակալ կ'ըլլայ է կը փառաւորէ ամենասուրբ
Երրորդութիւնը՝ որ ընտրեց ու այնչափ սիրեց
քեզի, որ քան ամէն ստեղծուած աւելի պատուոցի՝
բարձրացուց ու փառաւորեց քեզի : Ո՛վ օրբունի
է բարեգութ կոյս, խնորհ՝ Աստուծով որ զառ-
նան ու զզլան այն ամէնքը՝ որոնք կ'ըլտա-
նեն քեզի, է անէ ընդունիլ այս փորձիկ մե-
ծարանքը ծառայիդ, ինչքեղով քու Միտին
Աստուծաբարբէզ նաև իրեն բոլոր մեղքերուն
թողութիւն. ամէն :

(Ներշնչութիւն 100 օրուան՝ Եփեսոսի սյո-
ղագիւց ընդունել, որ կենց ընդունուել նաև Բա-
ստանի հոգեաց համար. — Պիտոս Ժ. 22 Յուն.
ուսր 1914):




Ա Ղ Օ Թ Բ

ԱՐ Ս. ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ

Ո՛վ ամենասուրբ Սիրտ Յիսուսի, Ո՛վ
ազիւր ամենայն բարեաց, կը պաշտեմ
ու կը սիրեմ քեզ, է զըջալով զանա-
պէս բոլոր մեղքերուս վրայ՝ քեզ կը
նուիրեմ իմ այս թշուառ սիրտս : Ըրէ՛
զայն խոնարհ, համբերող, մաքուր, է
ամէն բանի մէջ կու նպատակ քու սուրբ
փափաքներուդ : Տո՛ւր ինձի, ո՛վ բարի
Յիսուս, որ ապրիմ՝ քեզի նաև է քեզի
համար միայն : Պաշտպանէ՛ զիս վտանգ-
ներուն մէջ. միխիթարէ՛ զիս վշտաց ու
նեղուցեանց մէջ. պարզեմ՝ ինձի անող-
ջութիւնն մարմնոյ. օգնէ՛ ինձի ծամա-
նակաւոր պէտքերուս մէջ, օրնէ՛ իմ
ամէն գործերս ու սուր ինձի սրբա-
թեանք մեռնելու շնորհքը :

(Ներշնչութիւն 100 օրուան՝ Եփեսոսի սյո-
ղագիւց ընդունել, որ կենց ընդունուել նաև Բա-
ստանի հոգեաց համար. — Քիւնե.
գրիտոս ԺԵ, 4 Ռեկտ. 1915):



ՀԱՅՐԵՆԻՒԹԻՒՆ ԵՐԱԶԸ



Անոր կրազը շքեց է, լուսավառ,
Ու ծաղկելով իբրև ալիք մ'արծաթի՝
Պանդուխտ սըրտի մը բաժակէն կը յորդի,
Եւ արցունքի շիթերուն հետ կը կաթի :

Ան զոյ մըն է, զոյը լոյսին ծիրանի
Որ ատարան ցոյգերուն հետ կը զեղու